640—641 ԹԹ. ԱՐԱԲԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆ

ԷԴՈՒԱՐԴ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հայաստան կատարած արաբների առաջին արշավանքի, Դվինի առմանը վերաբերող հայոց և օտար աղբյուրների տեղեկությունների ջուրջ հայտնվել են տարբեր կարծիքներ։ Այդ կապակցությամբ Հ. Մանանդյանը գրել է. «Արաբներն առաջին անդամ մտել են Հայաստան հյուսիսային Միջադետքի կողմից ոչ թե 636 (Մ. Չամչյան, Կ. Բասմաջյան և ուրիշներ), 637 (կամ 638, ըստ Հ. Համբարյանի— Է. Դ.) կամ 639 (Է. Դյուլորիե և ուրիշներ) թվականներին, ինչպես այդ մատնացույց է արվում հայ և օտար ուսումնասիրություններում, այլ 640 (Մ. Ղազարյան) թվին»[1]։ Հ. Մանանդյանի պաշտպանած տեսակետի համաձայն Դվինի առումը տեղի էր ունեցել 640 թ. հոկտեմբերի 6-ին։ Մեծանուն գիտնականը նշել է, որ ինչպես ճիշտ դիտել է Մ. Ղազարյանը[2], 640 թ. արաբական արշավանքին են վերաբերում Բալազուրիի, Տաբարիի և Իբն ալ-Ասիրի հետևյալ վկայությունները։ Բալազուրի. «Իյադ նվաճեց Ամիդ առանց ճակատամարտի՝ Ուռհայի խաղաղության հիման վրա, նույն օրինակ և Մայֆարեկին, իսկ Կաֆարտութ ամրոցը և Մծբին՝ կռվով»։ Տուր Աբդինի, Մարդինի, Դարայի, Քարդայի, Բազաբդայի նվաճման և հավազանի իշխանի հետ պայմանագիր կնքելու մասին գրելուց հետո նա հաղորդում է. «Այս բոլորը կատարեցավ 19 թ. և Մուհառռամի օրերից (հաշված)՝ 20 թ.։ Իյադ նվաճեց Արզն Մծբինի խաղաղության հիման վրա և անցնելով կիրճից՝ հասավ Բիթլիս, եկավ Ելաթ և հաշտություն կապեց քաղաքի իշխանի հետ։ Գալով Աղի ջուրք («Թթու ջուրք»— Մ. Ղ.), որ Հայաստանումն է, նա չանցավ այն, այլ վերադարձավ և դրեց Բիթլիսի տիրոջ վրա նույն հարկը, որ նա Ելաթի (բնակչաց), մեծամեծաց և իշխանի վրա էր դրած։ Այստեղից Իյադ անցավ Ռաքքա, ապա Հիմս, ուր նրան Օմար կառավարիչ նշանակեց. վախճանեցավ 20 թ.»։ Տաբարի. «Իյադ ուղարկեց Օսման ի. Աբի-լ-Ասին Զորրորդ Հայք, այստեղ Սաֆֆան ի. Մուաթթալ Նուլամին նահատակեցավ տեղի ունեցած մի ճակատամարտի մեջ։ Բնակիչք խաղաղություն հաստատեցին Օսման ի. Աբի-լ-Ասի հետ»։ Իբն ալ-Ասիր (Հ. Մանանդյանը նշում է միայն էջը). «նա (Իյադը) ուղարկեց Օսման ի. Աբու-լ-Ասին Զորրորդ Հայք, որի ժողովուրդը պատերազմեցավ նրա հետ (Սաֆֆան ի. Մուաթթալ նահատակեցավ կռվի մէջ), բայց հետո խաղաղություն հաստատեց նրա հետ»[3]։

Ս. Մելիք-Բախշյանի կարծիքով Օսման իբն Աբու-լ-Ասի գլխավորությամբ Զորրորդ Հայքը նվաճելուց հետո արաբները ներխուժեցին Տարոն, և այստեղ նրանց առաջնորդեց «Աբդուլ-Ռահիմը» (Աբդռահիմ, ըստ Յովհան Մամիկոնյանի), որի գլխավորությամբ նրանք գնացին դեպի Այրարատ[4]։ Այս դեպքերը ժամանակագրորեն իրար կապելը հետևանք է Իբն ալ-Ասիրի, Յովհան

---

[1] Հ. Մանանդյան, Մանր հետազոտություններ. Արաբական արշավանքները Հայաստանում (ժամանակագրական դիտողություններ), Երևան, 1932, նույնի՝ Երկեր, հ. Բ, Երևան, 1978, էջ 512—513։

[2] M. Ghazarian, Armenien unter der arabischen Herrschaft, Marburg, 1903 S. 16.

[3] Հ. Մանանդյան, Երկեր, հ. Բ, էջ 511։ Նա հետևել է Բ. Խալաթյանցի թարգմանությանը («Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», Վիեննա, 1919, էջ 74—75, 80, 127)։ Իբն ալ-Ասիրի երկի վերոհիշյալ հատվածը Ա. Տեր-Ղևոնդյանը թարգմանել է. «Օսմանը Իբն Աբու-լ-Ասին ուղարկեց Զորրորդ Հայաստան, և սա կռվեց նրա բնակիչների դեմ...։ Օսմանը նրա բնակիչների հետ հաշտություն կնքեց» («Արաբական աղբյուրներ», հ. Բ, Իբն ալ-Ասիր, Երևան, 1981, էջ 45)։ Այնինչ, ինչպես ճիշտ հետևում է Բ. Խալաթյանցի թարգմանությունից, Օսման իբն Աբու-լ-Ասին Զորրորդ Հայք էր ուղարկել Իյադը։ Ա. Տեր-Ղևոնդյանը Իբն ալ-Ասիրի երկից չի թարգմանել հիշ. 19 թ. վերաբերող սկզբի հատվածը և վերոբերյալ պարբերությունը անմիջապես հաջորդել է հիշ. 17 թ. դեպքերի նկարագրությանը։

[4] Ս. Մելիք-Բախշյանի կարծիքով Մծբինը և Ամիդը ավերելուց հետո Օսման իբն Աբու-լ-Ասի զորամասերը մտան Զորրորդ Հայք։ Նա աղբյուրից թերի մեջբերում է կատարել.

Մամիկոնյանի և Սեբեոսի հաղորդումների միահյուսման։ Ս. Մելիք-Բախշյանը գրում է, որ. իր հաշվումներով կրկին անգամ հաստատվում է Ղ. Ալիշանի մատնանշած թվականի ճշգրտությունը Դվինի առման կապակցությամբ[5]։ «Եթե կարողանանք հաստատել, որ Եզրի մահվան թվականի, այսինքն՝ հայոց 89 թ. տրեի 20-ը ուրբաթ օր է եղել, ուրեմն ինչպես Դվինի գրավման ժամանակը, այնպես էլ Եզրի մահվան թվականը,— գրում է Ս. Մելիք-Բախշյանը,— կհաստատվի անվերապահ կերպով»[6]։ Աղբյուրներից հայտնի է Եզրի տասնամյա աթոռակալության մասին[7], սակայն նրա մահը չի նշված 89 թ.։ Ս. Մելիք-Բախշյանը անհիմն է համարում Մ. Օրմանյանի կարծիքը, ըստ որի Դվինի պաշարումը սկսվել է 640 թ. հոկտեմբերի 6-ին, իսկ քաղաքը գրավվել հունվարի 6-ին (641 թ.)։ Այս կարծիքը ժամանակին քննադատել էր Հ. Մանանդյանը[8]։

Բալաղուրիի վերոհիշյալ հաղորդմանը համապատասխանում է Իբն ալ-Ասիրի մեկ այլ տեղեկությունը, որի քննությունից պարզվում է, որ Հ. Մանանդյանի մեջ բերած հատվածներում խոսքը տարբեր արշավանքների մասին է։ Իբն ալ-Ասիր. «(Իյադը) գնաց Արզն և գրավեց այն, մտավ լեռնանցքը և անցավ Բաղեշ (Բադլիս) հասավ Խլաթ, որի պատրիկը հաշտություն կնքեց նրա հետ, և վերջապես հասավ ալ-Այն ալ-Համիդա (Թթու շուր) Հայաստանում։ Ապա վերադարձավ Ռակկա, գնաց Եմեսա (Հիմս) և մեռավ քսան թվականին»[9]։

Այսպիսով, արաբական աղբյուրներից վերը քաղված տեղեկությունները վերաբերում են տարբեր արշավանքների՝ 1. ըստ Տաբարիի և Իբն ալ-Ասիրի վերոհիշյալ առաջին հաղորդման, Իյադը Չորրորդ Հայք ուղարկեց Օսման իբն Աբու-լ-Ասին (հիշ. 19 թ.), 2. ըստ Բալաղուրիի և Իբն ալ-Ասիրի վերջին հաղորդման, Իյադը անձամբ գլխավորեց արշավանքը՝ Արզն-Բաղեշ-Խլաթ-Թթու շուր երթուղով, այնուհետև, վերադառնալով Հիմս, հիշ. 20 թ. մահացավ[10]։

Բալաղուրին այլ տեղում ևս հիշատակում է Չորրորդ Հայքը. «Երբ Օսման ի. Օֆֆան խալիֆ եղավ» (644—656), նա հրամայեց Մուավիային հարձակվել «Աշմուշատի վրա, որ Չորրորդ

«Իյադ ուղարկեց Աբու-Մուսային, որ հպատակեցավ» (Ս. Մելիք-Բախշյան, Հայաստանը VII—IX դդ., Երևան, 1968, էջ 34)։ Այնինչ իրականում. «Իյադ ուղարկեց Աբու-Մուսային Մծբին, որ հպատակեցավ» («Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», էջ 127)։ Ըստ Իբն ալ-Ասիրի և Տաբարիի, Մծբինը հպատակեցրեց Աբու-Մուսան, իսկ ըստ Բալաղուրիի և Յաքուբիի՝ Իյադը։ Ըստ Բալաղուրիի և Իբն ալ-Ասիրի, Ամիդը նույնպես Իյադը նվաճեց (նույն տեղում, էջ 74, 80, 104)։

5 Ղ. Ալիշանը, արաբների ներխուժման մասին գրել է Դվինի առման կապակցությամբ, որը, ըստ նրա, կայացել է 640 թ. հոկտեմբերի 6-ին (Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 407)։ Լեոն նույնպես այն տեսակետին էր, որ արաբական առաջին արշավանքը տեղի էր ունեցել 640 թ., սակայն Դվինի առումը, նրա կարծիքով, կայացել էր 641—642 թթ.՝ երրորդ արշավանքի ժամանակ (Լեո, Հայոց պատմություն. հ. Բ, Երևան, 1947, էջ 315)։ Լեոն, Հ. Մանանդյանը և ուրիշներ արաբների ներխուժումը Տարոն կապում են Հայաստան կատարած նրանց առաջին արշավանքի հետ։

6 Ս. Մելիք-Բախշյան, նշվ. աշխ., էջ 42։ Հարկ չկա ապացուցելու, թե 89 թ. արեի 20-ը ուրբաթ է եղել, քանի որ այդ հայտնի է տոմարագիտական աշխատություններից։

7 «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց» (այսուհետև Հովհաննես Դրասխանակերտցի). Մոսկվա, 1853, էջ 48, «Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն Տիեզերական» (այսուհետև՝ Վարդան), Մոսկվա, 1861, էջ 93։

8 Ըստ Հ. Մանանդյանի, Մ. Օրմանյանը փորձել է հաշտեցնել Սեբեոսի և Սամուել Անեցու հակասական հաղորդումները (Մ. Օրմանյան, Ազգապատում, Կոստանդնուպոլիս, 1912/1913, էջ 704—706, Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 518—519, ծան. 1)։ Ս. Մելիք-Բախշյանը (նշվ. աշխ., էջ 43), քննադատելով Է. Դյուլորիեին (Ed. Dulaurier, Recherches sur la chronologie arménienne technique et historique, t. I. Paris, 1859. p. 225, 227-231) և Ա. Մյուլլերին (A. Мюллер, История ислама, СПб. т. I, 1895, с. 289—290). նշել է, որ Դյուլորիեն կոպիտ սխալ է կատարել արաբական առաջին արշավանքի տարեթիվը համարելով 642 թ.։ Սակայն, ըստ Դյուլորիեի, առաջին արշավանքը կայացել էր 639 թ., իսկ 642 թ. նա նշել է որպես Դվինի առման տարի։

9 «Արաբական աղբյուրները», հ. Բ, էջ 46։

10 Մ. Ղազարյանը դժվարացել է որոշել, թե Հայաստանի թթու շրերի բազմաթիվ աղբյուրներից որն է նկատի առնված (M. Ghazarian, նշվ. աշխ., էջ 16, ծան. 3)։

Հայքումն է, և կամ հանձնարարել մեկին այդ գործը։ Մուավիան ուղարկեց Հաբիբ ի. Մասլամա Ֆիհրին և Սաֆվան ի. Մուաթթալ Սուլամին, որոնք մի քանի օրվա ընթացքում նվաճեցին քաղաքը... Մուավիան դրեց Սաֆվանին այնտեղ կառավարիչ, ուր նա վախճանվեց Մուավիայի խալիֆայության ժամանակ (661—680)։ Այլք կը պնդեն, սակայն թե ինքը Մուավիան արշավեց Աշմուշատի վրա երկու զորապետների հետ միասին և գրեց Սաֆվանին այնտեղ կառավարիչ, ուր նա մնաց մինչև իր մահը... Հաբիբ իբն Մասլաման Աշմուշատը առնելուց հետո հարձակվեց Կամախ ամրոցի վրա... Իյադ իբն Ղանմ ուղարկեց Հաբիբ իբն Մասլամա Ֆիհրին Աշմուշատից Մալաթիա, որը նա գրավեց. ապա բնակիչները փակեցին (նրա առջև) դաղաքի դռները։ Երբ Մուավիան կառավարիչ եղավ Ասորիքի և Միջագետքի վրա, նա ուղարկեց Հաբիբ ի. Մասլամային, որը նվաճեց Մալաթիան բռնությամբ»[11]։ Եթե չասենք, թե այստեղ ժամանակագրական կարգի շփոթ է (Հաբիբը Աշմուշատից Կամախ արշավեց Օսմանի օրոք, իսկ Իյադը մահացել էր հիշ. 20 թ.), ապա կարելի է ենթադրել, որ Մալաթիան և Աշմուշատը արաբները գրավել էին երկու անգամ՝ 640 թ. և հետագայում՝ Օսմանի տիրակալության ժամանակ։ Կարելի է ենթադրել, որ հիշ. 19 թ. Իյադի հանձնարարությամբ Հաբիբը Աշմուշատից հետո հարձակվեց Մալաթիայի վրա, իսկ Օսմանի խալիֆայության օրոք Հաբիբը և Սաֆվանը նվաճեցին Աշմուշատը, ինչպես նաև Մալաթիան՝ կրկին Հաբիբը։ Այս ենթադրության համար կարևոր փաստարկ է այն, որ Մավրիկիոսի վարչատարածքային վերափոխություններից հետո Աշմուշատը «այլ Չորրորդ Հայք» կազմում է Մուավիայի հրամանով Հաբիբի՝ դեպի Մալաթիա արշավելու մասին։ Ընդ որում, այս վերջին հաղորդումը կապվում է այն հատվածի հետ, ուր խոսվում է Մուավիայի հանձնարարությամբ Հաբիբի և Սաֆվանի կողմից Աշմուշատի գրավման մասին։ Բալազուրին, ընդ որում, հիշ. 19 թ. արշավանքի կապակցությամբ Չորրորդ Հայքը չի հիշատակում (նա այն հիշատակում է Օսման խալիֆի օրոք տեղի ունեցած արշավանքի առթիվ), սակայն հայտնի է, որ Մավրիկիոսի վարչատարածքային վերափոխություններից հետո Աշմուշատը «այլ Չորրորդ Հայքի» կազմում էր, իսկ «Վերին Միջագետք կամ Չորրորդ Հայք» նահանգի քաղաքներն էին Բալազուրիի հիշատակած Ամիդը, Մայաֆարկինը[12]։ Աշմուշատի երկրորդ գրավումը, ըստ այլոց հաղորդման, կատարվել էր անձամբ Մուավիայի կողմից։ Ուշագրավ է, որ Աշմուշատում կառավարիչ էր հաստատվել Սաֆվանը։ Այս ապացույց է Աշմուշատի՝ երկու անգամ գրավվելու մասին։

640 թ. արշավանքը դեպի Չորրորդ Հայք և Մալաթիա Հաբիբը և Օսման իբն Աբու-լ-Ասը որոշ ժամանակ միասին են գլխավորել, այնպես, ինչպես Հաբիբը մի քանի արշավանքներ՝ Սաֆվանի հետ։ Տարարին և Իբն ալ-Ասիրը հիշ. 19 թ. դեպքերի նկարագրությանը միահյուսել են Սաֆվանի սպանվելու մասին տեղեկությունը, որը վերաբերում է, ըստ Բալազուրիի, Մուավիայի խալիֆայության ժամանակաշրջանին։ Այսպիսով՝ Բալազուրիի, Տարարիի և Իբն ալ-Ասիրի հաղորդումները Միջագետքի կողմից արաբների՝ Հայաստան կատարած ներխուժումների մասին (հիշ. 19 թ.) հետևյալ պատկերն են ուրվագծում. 640 թ.՝ առաջին արշավանքը ընթացել էր Իյադի գլխավորությամբ Ամիդից Մայաֆարկին (Նիփկերտ՝ «Վերին Միջագետք կամ Չորրորդ Հայք» նահանգում), իսկ երկրորդը՝ Իյադի հանձնարարությամբ՝ կրկին Չորրորդ Հայքում («այլ Չորրորդ Հայքում») Օսման իբն Աբու-լ-Ասի գլխավորությամբ և Աշմուշատից դեպի Մալաթիա՝ Հաբիբի հրամանատարությամբ[13]։

Ա. Տեր-Ղևոնդյանի կարծիքով Իյադը, 640 թ. անցնելով Զորա պահակը, ներխուժեց Տարոն, ապա եկավ Խլաթ և գնալով հյուսիս՝ «Թթու ջրից» այն կողմ չանցավ և վերադարձավ Բաղիշ (Բաղեշ), իսկ նրա զորքը շարունակեց ճանապարհը դեպի Բզնունիք, Աղիովիտ, Բերկրի, Կոգովիտ, Դվին[14]։ Տարբեր ժամանակներում տեղի ունեցած դեպքերի նույնացումը արգասիք է

---

[11] «Արաբացի մատենագիրներ Հայաստանի մասին», էջ 75—76։ Հմմտ. Իբն ալ-Ասիր. «Երբ Իյադը նվաճեց Սամոսատը, Մալաթիա ուղարկեց Հաբիբ իբն Մասլամային, որը ուժով նվաճեց այն, սակայն հաշտություն կնքելուց հետո բնակիչները դրժեցին (պայմանը)» («Արաբական աղբյուրներ», հ. Բ, էջ 46)։

[12] Н. Адонц ,Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, с. 34, 168, 234—235.

[13] Ինչպես նշել է Ա. Տեր-Ղևոնդյանը, ըստ Ցաքուբիի, մոտ. հիշ 20 թ. (640—641) Օմար խալիֆը Հաբիբին ուղարկեց հռոմեացիների հողը, սակայն հայտնի չէ, թե որ վայրը նկատի ունի պատմիչը (А. Тер-Гевондян. Армения и Арабский халифат, Ереван, 1977, с 28): Արդյո՞ք խոսքը Մալաթիան նվաճելու մասին չէր։

[14] Ա. Տեր-Ղևոնդյանը նշելով, որ «Թթու ջուրը» դժվար է ճշգրիտ տեղորոշել, են-

արաբական աղբյուրների հաղորդումների (Իյադի գլխավորած արշավանքի մասին) ուսումնասիրության՝ Հ. Մանանդյանի պաշտպանած տեսակետի (ըստ որի Սեբեոսի հաղորդումը, արաբների դեպի Դվին արշավանքի առնչությամբ, վերաբերում է Հայաստան կատարած նրանց առաջին ներխուժման ժամանակաշրջանին) առումով։

20 թ. Մուհառռամ ամիսը համապատասխանում էր 21 դեկտեմբերի (640 թ.) 19 հունվարի (641 թ.)[15]։ Արաբական երրորդ արշավանքը, որը, ինչպես վերը տեսանք, նկարագրվում է Մուհառռամ ամսվա մասին եղած հաղորդումից հետո, չպետք է կապել Սեբեոսի հիշատակած դվինյան արշավանքի հետ, քանի որ, ինչպես հետևում է Բալաղուրիի և Իբն ալ-Ասիրի հաղորդումներից, արաբական զորախումբը «Թթու շրից» վերադարձավ Միջագետք։ Կարծում ենք, որ «Թթու շուրը» տվյալ դեպքում համապատասխանում է Ծաղկոտն գավառի Վարշակի կոչված Ջերմուկին, որը հիշատակում է Ղազար Փարպեցին[16]։ Ուրեմն, Իյադը Խլաթից հետո ներխուժել էր Խոռխոռունիք, Աղիովիտ և Ծաղկոտն գավառները և այնուհետև վերադարձել Հիմս։ Այսպիսով, Հայաստանում կատարած առաջին, երկրորդ և երրորդ (Արզնից մինչև Թթու շուր) արշավանքների ժամանակ արաբները Դվին չէին հասել։

Հ. Մանանդյանը, Դվինի առումը կապելով արաբական առաջին արշավանքի հետ, աղբյուրների հաղորդումները բաժանել է երեք խմբի (1. հնագույն՝ Սեբեոս, «Անանուն ժամանակագրություն», Դիոնիսիոս Տելմահրացի, Կիրակոս Գանձակեցի, Սամուել Անեցի, 2. ըստ արաբական ավանդության՝ Բալաղուրի, Ցաքուրի, Իբն ալ-Ասիր, 3. խառն և շփոթ՝ Ղևոնդ, Ասողիկ, Մովսես Կաղանկատվացի) և եզրակացրել, որ Դվինի առումը այդ վկայությունների համաձայն դրվում է 640, 640/1, 642/3, 644/5, 646/7 թթ.։ Այնուհետև գիտնականն անդրադարձել է այդ հարցի շուրջ հայտնված կարծիքներին. 640 թ. հունվարի 6՝ Մ. Չամչյան[17], 640 թ. հոկտեմբերի 6՝ Ղ. Ալիշան, Հ. Համբարյան[18], 642 թ. հունվարի 6՝ Տուռներիզ, Մորգան, 642 թ. հոկտեմբերի 6՝ Է. Դյուլորիե, Հ. Թոփչյան, Ա. Մյուլլեր[19], 646 թ.՝ Լոռան[20], 647 թ. հոկտեմբերի 6՝ Յու. Կուլակովսկի[21]։ Հ. Մանանդյանը հետևելով Մ. Ղազարյանին, գտնում է, որ երկրորդ խմբի աղբյուրների հաղորդումները վերաբերում են VII դ. 50-ական թվականներին։ Միակ վստահելին նա համարում էր առաջին խմբի աղբյուրների վկայությունները։ Միանալով Ղ. Ալիշանի և Հ. Համբարյանի տեսակետին, Հ. Մանանդյանը եզրակացրել է. «Դվինի առումը տեղի է ունեցել ոչ թե 641, 642 կամ 643 թթ., այլ 640 թ. հոկտեմբերի 6-ին, ուրբաթ»[22]։

թաղրարար այն տեղադրում է Թեոդոսուպոլիսից ոչ հեռու գտնվող հանքային ջրերի (Ջերմուկ) մոտ, որը հիշվում է պատմական աղբյուրներում (А. Тер-Гевондян, նշվ. աշխ., էջ 25, «Արաբական աղբյուրներ», հ. Բ, էջ 368, ծան. 34)։ Հայտնի է, որ Կարինի և Կոդովիտի ուղղությունները տարբեր են։

[15] V. V. Tsybulsky, Calendars of Middle East Countries, M., 1979. p. 22.

[16] «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1904, էջ 132։

[17] Ըստ Մ. Չամչյանի, Դվինի պաշարումը սկսվել է 639 թ. նոյեմբերի 28-ին, եթաղաքը գրավվել հունվարի 6-ին (640 թ.)։ Նա նշել է, որ Դիոնիսիոս Տելմահրացին այս դեպքը հիշատակել է տեղի ունեցած սելևկյան 952 թ. «որ է յամի տն. 641, փոխանակ դնելոյ միոյ ամաւ յառաջ» (Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, հ. Բ, Վենետիկ, 1795, էջ 343)։

[18] Հ. Համբարյանի կարծիքով Դվինը գրավվեց արաբական երկրորդ արշավանքի ժամանակ, որից երկու կամ երեք տարի առաջ տեղի էր ունեցել նրանց առաջին արշավանքը (Հ. Համբարեան, Հայք արաբացւոց իշխանութեան տակ. ժամանակագրական խնդիրներ Սեբէոսէն, «Ցուշարձան», Վիեննա, 1911, էջ 244)։

[19] Ed. Dulaurier, նշվ. աշխ., էջ 227—231; H. Thopdschian, Armenien vor und während der Araberzeit, «Հանդէս Հայագիտութեան» (Zeitschrift für armenischer Philologie, Herausgegeben von A. Manandian, Zweiter Band, erster Heft, Marburg, 1903, S. 64); А. Мюллер, նշվ. աշխ., էջ 280—290։

[20] J. Laurent, L'Armenie entre Byzance et l' Islam depuis la conquete arabe jusque'en 886, (Nouvelle édition revue et mise à jour par M. Canard), Lisbonne, 1980, p. 231, n. 183.

[21] Ю. Кулаковский, История Византии, т. III, Киев, 1915, с. 202.

[22] Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 519—521։ Հմմտ. Բ. Առաքելյան, Հայաստանը արաբական տիրապետության առաջին շրջանում և հայերի պայքարը անկախության համար, «Գիտական ժողովածու», 1941, էջ 66, Ս. Մելիք-Բախշյան, նշվ. աշխ., էջ 42—43։

Դվինի գրավման ժամանակը որոշելիս Սեբեոսի տեղեկությունը Եզրի կաթողիկոսության վերջին տարվա մասին Հ. Մանանդյանը կարևոր է համարել։ Այդ արշավանքի նկարագրությունում և դրան նախորդած ու հաջորդած հատվածներում պատմվում է Հերակլի մահվան, նրա որդու՝ Կոստանդինի գահակալության, Հայոց զորավար չընտրվելու, Միջագետքի կողմից թշնամու ներխուժման[23], Թեոդորոս Ռշտունու նախճավան գնալու, արաբների կողմից Դվինի առման, Եզրի մահվանից հետո Ներսեսի՝ կաթողիկոս դառնալու և վերջինիս միջամտությամբ Թեոդորոս Ռշտունու՝ Հայոց զորավար կարգվելու մասին[24]։

Ըստ Սամուել Անեցու, Դվինի առումը նույնպես տեղի էր ունեցել Հերակլի որդու՝ Կոստանդինի օրոք, որը, ըստ պատմիչի, գահակալել է երեք տարի[25]։ Ասողիկը արաբական այդ ներխուժումը մի դեպքում նշել է հայոց Ղե (ավելի ճիշտ է Ղ ընթերցվածը) թվականին, մյուս դեպքում՝ Հերակլի թոռան՝ Կոստանդին-Կոստաս Բ-ի, երկրորդ տարում[26]։ Վերջին նշումը առկա է նաև «Անանուն ժամանակագրությունում» և Ղևոնդի երկում[27]։ Ղ թվականի (641 թ. հունիսի 19—642 թ. հունիսի 18) տրեամիսը Կոստանդին-Կոստաս Բ-ի գահակալության առաջին տարվան էր վերաբերում։

Ըստ Մովսես Կաղանկատվացու, արաբները Դվին գրավել էին Կոստանդինի գահակալության վեցերորդ տարում[28], որը, ինչպես նշել է Ք. Պատկանյանը, համապատասխանում էր 647 թ.։ Գիտնականը անդրադարձել է նաև Դյուլորիեի վերոհիշյալ կարծիքին և այնուհետև եզրակացրել. «Բոլոր հայ պատմիչների կարծիքով Դվինը գրավվել էր արաբների կողմից 644—647 թթ. միջև»[29]։ Ըստ Յու. Կուլակովսկու, Դվինի առումը տեղի էր ունեցել 647 թ. հոկտեմբերի 6-ին[30]։ Ատրպատականով արաբների՝ Հայաստան կատարած արշավանքը Կուլակովսկին իրավացիորեն թվագրել է 647 թվականով[31]։ Սակայն, միևնույն ժամանակ, նա նույնացրել է Սեբեոսի[32] և

А. Тер-Гевондян, նշվ. աշխ., էջ 25—26, «Բյուզանդական աղբյուրներ», հ. Գ, Թեոփանես Խոստովանող, թարգմ. բնագրից, առաջաբան և ծան. Հ. Բարթիկյանի, Երևան, 1983, էջ 248, ծան. 308։

23 Հ. Թոփչյանը նշել է 641 թ. (H. Thopdschian, նշվ. աշխ., էջ 61)։

24 «Պատմութիւն Սեբէոսի» (այսուհետև՝ Սեբէոս), աշխատ. Գ. Արգարյանի, Երևան, 1979, էջ 137—139։ Հմմտ. Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 47—48։

25 «Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» (այսուհետև՝ Սամուել Անեցի), Վաղարշապատ, 1893, էջ 80։ Հմմտ. «Անանուն ժամանակագրութիւն», Վենետիկ, 1904, էջ 77։

26 «Ստեփանոսի Տարոնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական» (այսուհետև՝ Ասողիկ), Ս. Պետերբուրգ, 1885, էջ 98, 142։ «Երրորդն» ընթերցվածը (նույն տեղում, էջ 120) Հ. Մանանդյանը ուղղել է «երկրորդն» (նշվ. աշխ., էջ 517)։ Ասողիկի հաղորդումները որոշ վերապահությամբ վերաբերում են արաբական տարբեր արշավանքներին, որոնց ընթացքում տեղի ունեցան 1. Դվինի առաջին առումը (Ասողիկ, էջ 120, 142), 2. Պոռոսպի պարտությունը Արտազ գավառում [նույն տեղում, էջ 120, հմմտ. «Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց» (այսուհետև՝ Ղևոնդ), Ս. Պետերբուրգ, 1887, էջ 7], 3. Հայք, Վիրք, Աղվանք ներխուժումները (Ասողիկ, էջ 98)։

27 «Անանուն ժամանակագրութիւն», էջ 77, Ղևոնդ, էջ 9։

28 Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի, Երևան, 1983, էջ 317։

29 «История императора Иракла. Сочинение епископа Себеоса». перев. К. Патканяна, СПб., 1862, с. 211, прим. 203.

30 Ю. Кулаковский, նշվ. աշխ., էջ 199—202։

31 Յու. Կուլակովսկին այս հարցում, թերևս, հետևել է Ք. Պատկանյանի տեսակետին (տե՛ս նաև «История халифов вардапета Гевонда», СПб., 1862, с. 228 прим. 31)։ Հ. Թոփչյանը սխալ է համարել Բար-Հեբրեոսի (Աբուլ-Ֆարաջ) ժամանակագրությունը, թե 958 թ. (—647 թ.) Մուավիան իր ուժերը բաժանեց երկու մասի, որոնցից մեկը Հաբիրի գլխավորությամբ ուղարկեց Հայաստան (H. Thopdschian, նշվ. աշխ., էջ 71)։ Սակայն Բար-Հեբրեոսի հաղորդումը ևս մեկ փաստարկ է Ատրպատականով արաբական նշված արշավանքը 647 թ. կայացած լինելու կարծիքի օգտին։ Այդ արշավանքի մասին է վկայում նաև Տաբարիի մի հաղորդումը («Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», էջ 88, 128)։

32 647 թ. արշավանքի կապակցությամբ Սեբեոսը չնայած չի խոսել Դվինի գրավման մասին, սակայն հնարավոր է, որ Այրարատի, Տայքի և Վիրքի ուղղություններով հարձակված արա-

Մովսես Կաղանկատվացու տեղեկությունները՝ տարբեր տարիների արաբական երկու արշավանքների (մեկը՝ Միջագետքի, մյուսը՝ Ատրպատականի կողմից) մասին։

Դվինի առաջին առումը արաբների կողմից[33] վերոհիշյալ աղբյուրներում նշված է Հերակլի մահվանից հետո, նրա որդու՝ Կոստանդինի կամ թոռան՝ Կոստաս Բ-ի օրոք։ Հ. Մանանդյանը ընդունում է, որ Հերակլի գահակալության տարիներն էին 610—641 թթ.[34], սակայն 641 թ. մերժում է որպես Դվինի առման տարի, քանի որ այդ թվականի տրե ամսվա 20-ը եղել է ոչ թե ուրբաթ, այլ շաբաթ։ Սեբեոսի շարադրանքին հարազատ մնալու համար նրա երկում Դվինի առման պահպանված ամսաթիվը («աւուր Ի էր տրէ ամսոյն, յաւուր ուրբաթի») առաջարկում ենք վերականգնել «աւուր ԻԶ էր տրէ ամսոյն, յաւուր ուրբաթի»։ Եթե մեր այս ենթադրությունը հիշյալ է, ուրեմն Դվինի առաջին առումը արաբների կողմից տեղի էր ունեցել հայոց Ղ թվականի տրե ամսվա 26-ին (641 թ. հոկտեմբերի 12-ին), ուրբաթ[35]։

Դվինի առաջին առումը տեղի էր ունեցել Հերակլի մահվանից հետո և Ներսեսի՝ կաթողիկոս[36] դառնալուց առաջ, ինչպես վկայված է վերոհիշյալ հայկական աղբյուրներում։ Թվում է, թե

բական առաջին զորախումբը ճանապարհին թալանի և ավերածության մատնած լիներ նաև Դվինը։ Կաղանկատվացու հաղորդումը 35 հազ. գերիների մասին հուշում է, որ եթե Կոստասի գահակալության «Զ» ամի հիշատակությունը գրչական վրիպակ չէ (ինչպես «Անանուն ժամանակագրությունում» և Ղևոնդի՝ ու Ասողիկի երկերում, այնպես էլ այստեղ կարող էր լինել «Բ» ամի, որը, այնուամենայնիվ, նույնպես մեկնաբանման կարիք ունի), ապա կարելի է ենթադրել, որ պատմիչը տեղյակ էր արաբական 641 և 647 թթ. արշավանքներին, և «Զ» ամին վերաբերող շարադրանքը շարունակություն է Սեբեոսի հաղորդած Կոստասի գահակալության «Ե» ամի, որի հաջորդ տարում տեղի ունեցավ Արծափի առումը։ Կաղանկատվացու երկում արաբական երկու արշավանքների մասին հաղորդումները, թերևս, նույնացված են։ Առաջինին է վերաբերում 35 հազ. գերեվարությունը, երկրորդին՝ Կոստասի «Զ» ամին։

33 Սամուել Անեցին գերեվարվածների թիվը նշել է 30 հազ., իսկ Վարդանը՝ 37 հազ.։ Հովհաննես Դրասխանակերտցին (էջ 48) և Սամուել Անեցին (էջ 80—81, հմմտ. Վ ա ր դ ա ն, էջ 93) հաղորդում են, որ Ներսես կաթողիկոսը կառուցածից հետո ս. Սարգիս վկայարանը վերստին կառուցեց։ Կիրակոս Գանձակեցին («Պատմություն Հայոց», աշխատ. Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 60) գրում է, որ Ներսեսը այն կառուցել էր մինչ կոտորածը, որը, ըստ Սամուել Անեցու (էջ 80), տեղի էր ունեցել «Սուրբ յայտնութեան» օրը։ Ղ. Ալիշանի կարծիքով պատմիչները շփոթել են երկու արշավանքներին վերաբերող դեպքերը, իսկ վկայարանը Ներսեսը պետք է կառուցած լիներ արաբների երկրորդ արշավանքից հետո, որը 640 թվականից 6—7 տարի անց էր տեղի ունեցել (Ղ. Ա լ ի շ ա ն, Այրարատ, էջ 408)։ Հ. Մանանդյանը, չընդունելով Մ. Օրմանյանի վերոհիշյալ կարծիքը կապված 641 թ. հունվարի 6-ի հետ, փաստորեն ժխտել է Սամուել Անեցու հաղորդումը «Սուրբ յայտնութեան» օրվա մասին և նախապատվությունը տվել է Սեբեոսի հաղորդմանը («յաւուրն հինգերորդի դիմեցին ի վերայ քաղաքին. մատնեցաւ քաղաքն ի ձեռն նոցա»), քանի որ Դվինի պաշարումը տևել էր ոչ թե երեք ամիս, այլ հինգ օր։ Հնարավոր է, որ Ներսեսը Դվինի առաջին առումից (641 թ.) հետո սկսեց կառուցել վկայարանը և այնտեղ ամփոփեց սպանվածների ոսկորները, իսկ շինարարական աշխատանքները կարող էին ավարտվել 642 թ. սկզբներին։

34 Այժմ ընդունված է նշված բյուզանդական կայսրերի գահակալության հետևյալ կարգը. Հերակլ՝ 5 հոկտեմբերի 610 թ.—11 փետրվարի 641 թ. (Սեբեոսը նշել է 30 տարի, որը մոտ է իրականությանը, քանի որ Հերակլը թագավորել է 30 տարի, 4 ամիս, 6 օր։ «Անանուն ժամանակագրությունում» նշված է «ամս երեսուն և մի», էջ 76), Կոստանդին Գ՝ 641 թ. փետրվարի 11-մայիսի 24, Հերակլոնաս՝ 641 թ. մայիսի 25-սեպտեմբերի վերջ, Կոստաս Բ՝ 641 թ. սեպտեմբերի վերջից-668 թ. սեպտեմբեր (տե՛ս „Traite d'etudes Byzantines I. La Chronologie par V. G r u m e l", Paris, 1958, p. 356--357).

35 Տոմարական հաշվումները կատարել ենք Բ. Թումանյանի և Հ. Բաղալյանի հրատարակած աղբյուրների հիման վրա (տե՛ս Բ. Ե. Թ ո ւ մ ա ն յ ա ն, Առձեռն տոմարագույց, Երևան, 1965, էջ 16, Ն ո ւ յ ն ի՝ Տոմարի պատմություն, Երևան, 1972, էջ 55, 115—117, Հ. Ս. Բ ա ղ ա լ յ ա ն, Տրացույցի պատմություն, Երևան, 1970, էջ 35)։

36 Ի տարբերություն այլ հետազոտողների, որոնք Եզրի կաթողիկոսության վերջին և Ներսեսի առաջին տարին համարում են 640 թ., Կ. Մելիք-Օհանջանյանը իրավացիորեն նշում է 641 թ. (տե՛ս Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, ժամանակագրական տախտակներ, էջ 402)։

Սեբեոսի հաղորդումներում հակասություն գոյություն ունի դվինյան արշավանքի և Հերակլի որդու՝ Կոստանդինի գահակալության կապակցությամբ։ Սակայն եթե հիշենք, որ Իյադի գլխավորած արշավանքի երթուղին (մինչև Թքու չուր) համապատասխանում էր մի քանի ամիս անց դեպի Դվին ընթացած արաբական արշավանքի երթուղու մի հատվածին, ապա, թերևս, հնարավոր է ենթադրել, որ Սեբեոսի մոտ միաձուլվել են այդ երկու արշավանքներին վերաբերող տեղեկությունները։ Հիջ. 19 թ. և Մուհառռամի օրերից հաշված 20 թ., այսինքն՝ 640 թ. ընթացքում և մինչև 641 թ. սկիզբը Իյադը նվաճեց վերոհիշյալ քաղաքները։ Դրանից հետո նա Արդնից անցավ Թքու չուր և, վերադառնալով Հիմս, նույն հիջ. 20 թ. մահացավ[37]։ Իյադը Արդնից Թքու չուր պետք է եկած լիներ 641 թ. դարնանը, այսինքն՝ այն ժամանակ, երբ Բյուզանդիայում կայսր էր Հերակլի որդին՝ Կոստանդին Դ-ն։ Սեբեոսի մոտ այդ երկու արշավանքների մասին տեղեկությունների շաղկապման հանգամանքը նկատի ունենալու դեպքում միայն հնարավոր կլինի բացատրել Հերակլի որդու՝ Կոստանդինի ժամանակաշրջանի նույնացումը տրե ամսում տեղի ունեցած դվինյան արշավանքի հետ։ Ըստ Սեբեոսի, արաբական զորքը հասել էր Այրարատ, իսկ Թեոդորոս Ռշտունին գտնվում էր Նախճավանում։ Թեոդորոսը, գալով Կոգովիա, հարձակվում է Դվինից ավարով և գերիներով վերադարձող ոսոխի վրա, սակայն անհաջողության է մատնվում, քանի որ իր կողմից գլխավորած հայոց ուժերը սակավաթիվ էին[38]։ Ըստ Ղևոնդի, երբ Թշնամին ներխուժեց Հայաստան, Թեոդորոս Ռշտունին շտապեց փակել նրա ճանապարհը Զորա կիրճում (Զորապահակ), սակայն ուշացավ[39]։ Ա. Տեր-Ղևոնդյանը այն կարծիքին է, որ Թեոդորոս Ռշտունին շտապեց հարավ, որ փակի ճանապարհը Զորապահակ լեռնանցքի կողմից, իսկ երբ Թշնամին հասավ Դվին, Թեոդորոսը սպասում էր Նախճավանում, որից հետո Կոգովիտում դարանակալեց[40]։

Կարծում ենք, Թեոդորոսը պետք է Նախճավան գնացած լիներ՝ Թշնամու հարձակումը սպասելով Ատրպատականի կողմից։ Կադիսիայի ճակատամարտից (636 թ.)[41] մի քանի տարի անց արաբները ասպատակել էին Ատրպատականը (մոտ. 639 թ.) և ընդհուպ մոտեցել Հայաստանին՝ հարավ-արևելքից[42]։ Թեոդորոսը, ըստ երևույթին, տեղյակ լինելով արաբների վերահաս ներխուժանը, սակայն հաստատապես չիմանալով դրա ուղղությունը, եկել էր Նախճավան։ Երբ լուրը հասավ, որ Թշնամին կրկին հարձակվել էր Միջագետքի կողմից, Թեոդորոսը շտապեց արևմուտք, փորձելով փակել արաբների ճանապարհը Զորապահակում։ Սակայն նա ուշացել էր։ Որտե՞ղ կարող էր լինել Թշնամու զորքը, երբ Թեոդորոսը հասավ Զորապահակ։ Եթե արաբները Այրարատ արդեն հասած լիներ, ապա Թեոդորոսը այդ մասին տեղյակ կլիներ, քանի որ Նախճավանից Զորապահակ տանող ճանապարհն անցնում էր վանա լճից հյուսիս ընկած գավառներով։ Ուրեմն, երբ Թեոդորոս Ռշտունին հասավ Զորապահակ, արաբները այդտեղով արդեն անցել էին, սակայն Բզնունիքով և Աղիովիտով դեռևս Այրարատ չէին ներխուժել։ Այդ նշանակում է, որ Թեոդորոս Ռշտունու՝ Զորապահակ հասնելու ժամանակ արաբները ներխուժել էին Տարոն «առին գնա»[43]։ Սեբեոսի այս հիշատակությունը Տարոնի մասին ինչ-որ չափով հա-

---

37 Հիջ. 20 թ. ավարտվում է 641 թ. դեկտեմբերի 9-ով (V. V. Tsybulsky, նշվ. աշխ., էջ 22)։

38 Սեբեոս, էջ 138—139։

39 Ղևոնդ, էջ 9։

40 Ա. Տեր-Գևոնդյան, նշվ. աշխ., էջ 24—26։ Ս. Մելիք-Բախշյանը առեղծված է համարում Թեոդորոս Ռշտունու հայտնվելը Զորապահակից հետո Նախճավանում (Ս. Մելիք-Բախշյան, նշվ. աշխ., էջ 35—37)։

41 А. И. Колесников, Завоевание Ирана арабами, М., 1982, с. 95—96.

42 Արաբները 639 թ. ներխուժել և սկսել էին Ատրպատականի նվաճումը («Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», էջ 82, 104), որը (ըստ Տաբարիի «Բացի ամրոցավայրերից») ավարտվեց 643 թ.։

43 Սեբեոս, էջ 138, 304—305, ծան. 473։ Ղ. Այվազյանը արաբների ներխուժումը Տարոն և Դվինի առումը նշել է 640 թ., չնայած ուշադրություն է դարձրել Սեբեոսի հաղորդման վրա, ըստ որի այդ իրադարձությունները կատարվել էին Հերակլի մահվանից հետո, նրա որդու՝ Կոստանդինի գահակալության ժամանակ (տե՛ս К. В. Айвазян, «История Тарона» и армянская литература IV—VII вв., Ереван, 1976, с. 157)։ Ինչպես տեսանք, վերջին փաստը նույնպես մեկնաբանման կարիք ունի։

մահնչուն է Յովհան Մամիկոնյանի[44] և «Պատմութիւն սրբ. Ներսիսի»[45] երկերում պահպանված տեղեկություններին՝ արաբների՝ Տարոն ներխուժելու վերաբերյալ։

Արաբական աղբյուրներից հայտնի է, որ Աբդ ար-Ռահման իբն Ռաբիան 642—643 թթ. ժամանակել էր Ալ-Բարի (Դարբանդ) նվաճմանը։ Նրան Օմար խալիֆը նշանակել էր Ալ-Բաբի կառավարիչ՝ Սուրակայի մահվանից հետո։ Աբդ ար-Ռահմանը, որին նաև կոչում էին Զուլ-Նուր, սպանվեց 652 կամ 653 թվականներին[46]։ Յովհան Մամիկոնյանի երկում «Արդռահիմի» մասին տեղեկությունները կարող են վերաբերել տարբեր տարիների արաբական արշավանքներին։ 641 թ. արշավանքի կապակցությամբ երկում, ըստ երևույթին, պահպանվել է Տարոն ներխուժման փաստը[47]։ 647 թ. արշավանքին պետք է վերաբերի Յովհան Մամիկոնյանի այն հաղորդումը, որ Աբդռահիմը (Արդռա-Ռահման) անցավ Հարքով, Բասենով, Վիրքով, Ջավախքով և վերադարձավ։ Հիշենք, որ 647 թ. արշավանքը ընթացել էր երեք ուղղություններով 1. Այրարատ-Տայք-Վիրք, 2. «կողմանք Սեպհական գնդին»— Հէրևան (Հարքում)— Կոգովիտ, 3. Աղվանք[48]։ Յովհան Մամիկոնյանի հիշատակությունը Բասենի, Վանանդի, Ջավախքի և Վիրքի մասին պետք է առնչվի Սեբեոսի հիշատակած առաջին՝ ուղղության հետ, իսկ Հարքի՝ երկրորդ։ Ըստ Սեբեոսի, Թեոդորոսը գլխովին շախշախեց արաբական երկրորդ զորախումբը, որի հրամանատարները՝ Օթմանը և Օդբայը սպանվեցին[49]։ Աբդ ար-Ռահմանը պետք է գլխավորած լիներ առաջին ուղղությամբ ներխուժած զորախումբը։ Իսկ երրորդ զորախմբի հրամանատարը, եթե Բար-Հեբրեոսի վերոհիշյալ հաղորդումը իրոք առնչվում է 647 թ. արաբական արշավանքին, պետք է լիներ Հաբիբը։ Աբդ ար-Ռահմանը երկու անգամ է գլխավորել ասպատակությունները Հայաստանում 641 թ.՝ Միջագետքի կողմից, 647 թ.՝ Ատրպատականի[50]։

---

44 «Եւ յետ Ը ամի եկն Աբդռահիմ, քեռորդին Մահմեդի... Եւ ի վաղիւն ժողովեալ ի ստորոտն Գրգռոյ, ի դաշտն որ ընդ հարաւոյ...։ Եւ ապա ի մէջ առեալ զզաւրսն Հայոց, ամենեցուն զկատարած կենաց հասուցանէին։ ...Իսկ Աբդռահիմ անցանէ ի Հարք և ի Բասեան, և ի Վիրս և ի Ջաւախս, և ի Վանանդ, առեալ հարկս դառնայ ի Տաճկաստան» (Յ ո վ հ ա ն Մ ա մ ի կ ո ն ե ա ն, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 285—286)։ Հենվելով «Ը ամի» հաղորդման վրա որոշ հետազոտողներ արաբների այդ ներխուժումը դնում են 636—639 թթ., սակայն Հ. Մանանդյանը իրավացիորեն նման կարծիքը մերժել է, նշելով, որ արաբները չէին կարող Հայաստան մտնել Միջագետքը և նրա գլխավոր քաղաքները նվաճելուց առաջ, որը տեղի ունեցավ 639—640 թթ. (Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, նշվ. աշխ., էջ 512)։

45 Այստեղ համարյա նույն տեղեկություններն են բերվում, ինչ և «Պատմութիւն Տարօնոյ» երկում։ Նաև նշվում է, որ Հերակլը սպանեց Խոսրով Բ-ին (իրականում նա սպանվեց իր զորավարների կողմից) «յետ ութսուն ամի թվականին Հայոց» [«Պատմութիւն սրբոյն Ներսիսի Պարթևի Հայոց Հայրապետի։ Պատմութիւն յայտնութեան նշխարաց Սրբ. Ներսիսի» («Սովորք հայկականք»), Վենետիկ, 1853, էջ 43—44, տե՛ս նաև Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, նշվ. աշխ., էջ 509]։

46 «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», էջ 84, 89—90։ Իբն ալ-Ասիրի հաղորդումը Աբդ ալ-Ռահմանին Շահրիար թագավորի ներկայանալու և այնուհետև Սուրակայի մոտ գնալու մասին Ա. Տեր-Ղևոնդյանը ճիշտ է թարգմանել («Արաբական աղբյուրներ», էջ 49)։ Իսկ ըստ Պ. Ժուզեի թարգմանության հետևում է, որ Շահրիարը բանակցեց Աբդ ալ-Ռահմանի հետ և ներկայացավ Սուրակային, այնուհետև Աբդ ալ-Ռահմանը Շահրիարին ուղարկեց Սուրակայի մոտ [«Материалы по истории Азербайджана из «Тарих-ал-камиль» (полного свода истории) Ибн-ал-Асир. перев. П. Жузе, Баку, 1940, с. 13)]:

47 Ա. Տեր-Ղևոնդյանը դրում է, որ Իյադը 640 թ. ներխուժեց Տարոն և նրա հետ է կապում «Աբդռահիմ»-ի մասին եղած տեղեկությունը (նշվ. աշխ., էջ 24)։ Սակայն դեպի Տարոն Իյադի արշավանքի մասին աղբյուրները չեն վկայում։ Ս. Մելիք-Բախշյանը և Ա. Տեր-Ղևոնդյանը Յովհան Մամիկոնյանի հաղորդումը իրավացիորեն կապում են Սեբեոսի հաղորդման հետ՝ զվինյան արշավանքի մասին, սակայն այն 640 թվականով ժամանակագրելը նրանց խանգարել է՝ հաշվի առնելու Սեբեոսի հաղորդումները Հերակլի մահվան ժամանակաշրջանի և դրան հաջորդած վերոհիշյալ իրադարձությունների վերաբերյալ։

48 Ս ե բ է ո ս, էջ 145։ Տե՛ս նաև ՊԲՀ, 1982, № 2, էջ 106—116։

49 Նույն տեղում։

50 Աբդ ար-Ռահմանը իր կյանքի վերջին տարիներին, վարելով Ալ-Բաբի կառավարչի պաշտոնը, միևնույն ժամանակ կարող էր գլխավորել արաբական զորքերի ներխուժումները հարևան երկրները։

Մին՝ Թեոդորոս Ռշտունին (641 թ.) գտնվում էր Զորապահակի շրջանում, արաբները ասպատակում էին Տարոնը այնուհետև այնտեղից արշավում Դվինի վրա։ Թեոդորոսը ուշացումով կնաց նրանց հետևից, սակայն հայոց զորքի սակավաթվության պատճառով ստիպված էր դարանակալել Կոգովիտում։ Դվինից ավարով վերադարձող ոսոխը պարտության է մատնում Թեոդորոս Ռշտունու գլխավորած զորքը։ Այդ 641 թվականին էր։ Իսկ 647 թ. նույն Կոգովիտում Թեոդորոս Ռշտունին չարաչար պարտության մատնեց խալիֆայության վերոհիշյալ դրախումբը։

Արաբական առաջին, երկրորդ և երրորդ արշավանքները Հայաստան տեղի են ունեցել 640 թ. և 641 թ. առաջին կեսում, իսկ չորրորդը՝ 641 թ. երկրորդ կեսում, որի ընթացքում Դվինը գրավվեց (հոկտեմբերի 12-ին) առաջին անգամ։ Այդ արշավանքների ժամանակ, ինչպես հայտնի է, խալիֆայությունը չկարողացավ իր տիրապետությունը հաստատել Հայաստանում, սակայն թշնամին ծանր ավերածություններ պատճառեց, առանց այն էլ իրանա-բյուզանդական նվաճումներից[51] բազմաթիվ արհավիրքներ կրած հայոց երկրին։

АРАБСКИЕ ПОХОДЫ В АРМЕНИЮ В 640—641 гг.

ЭДУАРД ДАНИЕЛЯН

Резюме

В 640—641 гг. арабы совершили четыре похода в Армению. Во время первого (640 г.), наряду с некоторыми верхнемесопотамскими городами, имя был взят Маяфаркин (Нпркерт) (в провинции «Верхняя Месопотамия или Четвертая Армения»). В результате второго похода в «другую Четвертую Армению», имевшего место в том же году, был взят город Ашамушат, после чего арабское войско двинулось на запад и захватило Малатию, на противоположном берегу р. Евфрат. Однако эти города арабам пришлось вновь завоевывать при халифе Османе (644—656). Во время третьего похода (весной 641 г.) войско халифата, вторгнувшись в Армению, прошло через Арзн, Балеш, Хлат и, дойдя до «ал-айн-ал-хамида» («Кислые воды», можно отождествить с «джермуком Варшака» в гаваре Цахкотн), вернулось в Северную Месопотамию. Маршрут четвертого похода (во второй половине 641 г.) пролегал через ущелье Дзора (к югу от которого находился город Балеш), гавары Тарон, Бзнуник, Ахиовит, Коговит. Арабы достигли Айрарата и 12-го октября 641 г. захватили Двин. Принятая в историографии дата — 6 октября 640 г., — как время взятия Двина арабами, не подтверждается источниками. Теодорос Рштуни во главе малочисленного отряда безуспешно атаковал войско халифата на обратном пути в Коговите. Первые походы арабов в Армению носили опустошительный и грабительский характер.

---

51 591 թ. իրանա-բյուզանդական բաժանումից հետո Արևմտյան Հայաստանը (նոր ընդգրկմամբ) գտնվում էր Բյուզանդիայի տիրապետության տակ, իսկ Արևելյան Հայաստանը, որը մնացել էր Իրանի գերիշխանության ներքո, բաղկացած էր Մարզպանական Հայաստան (ընդգրկում էր Այրարատի արևելյան հատվածը, Վասպուրական գունդը, որն այդ ժամանակաշրջանից համազոր էր դառնում Անանիա Շիրակացու «Աշխարհացույցի» Վասպուրական աշխարհին, Մոկքը, Պարսկահայքը), Սյունիք, Ուտիք և Արցախ մասերից։ Սասանյանների տիրապետությունը Արևելյան Հայաստանում VII դ. 30-ական թվականներին կորցրել էր իր ուժը և շուտով վերացավ։ Հայոց պետական գործիչները Արաբական խալիֆայության նվաճումների պայմաններում անդուլ պայքար էին մղում հանուն Հայաստանի տարածքային ամբողջականության վերականգնման (տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1986, № 8, էջ 57, 66)։ Մեր նույն հոդվածում, որտեղ խոսվում է Մասեացոտնի և «կողմն Արագածուս մասին, տպագրված է. «...Նավրիկիոսին զիշած հողերի թվում...» (էջ 56, ծան. 12)։ Անհրաժեշտ ենք համարում տալ հետևյալ ուղղումը. «...Մավրիկիոսին չզիշած հողերի թվում...»։ Բ. Հարությունյանը իրավացիորեն նշել է, որ բյուզանդա-իրանական սահմանագիծը անցնում էր Մասեացոտն գավառի արևմտակողմով (Բ. Հ. Հարությունյան, Մեծ Հայքի Վասպուրական աշխարհը ըստ «Աշխարհացույց»-ի, «Բանբեր Երևանի համալսարանի», 1983, № 3, էջ 132)։